



## Press Release

Armenian Catholicosate, PO Box 70 317, Antelias – Lebanon Tel.: (+961-4) 523 461/2, 410 001/3, Fax: (+961-4) 419 724

E-mail: [cathcil@cathcil.org](mailto:cathcil@cathcil.org) Website: [www.armenianorthodoxchurch.org](http://www.armenianorthodoxchurch.org)

### ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ԿՈՒՂԷ ԻՐ 11-ՐԴ ՀՈՎՈՒԿԱՆ ԳԻՐԸ

**ԱՆԹԻԼԻԱՍ** - Վերջին տարիներուն զանազան առիթներով Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս ընդհանրապէս մեր կեանքին ու յատկապէս երիտասարդութեան առնչուած զանազան խնդիրներու ու մարտահրաւերներու գծով հովուական յատուկ գիրեր ուղղեց երիտասարդներուն: Անգլերէն լեզուով գրուած այս գիրերուն նպատակն է քննարկումներու, յիշեցումներու ու հարցադրումներու ճամբով մեր երիտասարդութիւնը հրաւիրել ինքզինք դիտելու ու քննելու եւ ներկայ աշխարհի մարտահրաւերներուն դիմաց իր իւրայատուկ դերը ճշդելու մեր ժողովուրդի կեանքէն ներս:

Հովուական այս գիրերուն ճամբով Վեհափառ Հայրապետին ճիգն է մօտեցնել մեր երիտասարդութիւնը մեր ազգին ու եկեղեցւոյ արժէքներուն, ըմբռնումներուն ու աւանդութիւններուն, զանոնք դիտելով համաշխարհայնացած մշակոյթի ծիրէն ներս:

Երէկ իր 11րդ գիրը յղեց Վեհափառ Հայրապետը մեր երիտասարդներուն: Այս վերջին գիրին (Տես Կաթողիկոսարանի կայքէջը) հիմնական նիւթը հայ մշակոյթն է՝ յարաբերաբար համաշխարհայնացումին:

\*\*\*\*\*

Press Release

For Immediate Use - Catholicosate of Cilicia

Communication and Information Department

Contact: V.Rev.Fr.Krikor Chiftjian, Communications Officer

Tel: (+961- 4) 410001, 410003

Fax: (+961- 4) 419724

E- mail: [cathcil@cathcil.org](mailto:cathcil@cathcil.org)

Web: [www.armenianorthodoxchurch.org](http://www.armenianorthodoxchurch.org)

PO Box 70 317

Antelias-Lebanon